

մէջէն տեսան զինքը՝ իրենց երեսները ծեծեցին եւ ազադակեցին եւ լացին, այնպէս որ իրենց ձայները օդը լեցուցին»:

«Ալ-Աֆշին ըսաւ անոնց. Երէկ գիշեր դուք ողբացիք՝ Ան մեզ կալանաւորեց. եւ այսօր դուք իրեն համար կու լաք: Աստուած ձեզ անիծէ»:

«Սակայն անոնք ըսին. Ան մեզի հետ լաք էր »:

«Ասոր վրայ ալ-Աֆշին հրամայեց եւ Բարակ տուն մը տարուեցաւ եւ յանձնուեցաւ ալ-Աֆշինի մարդոց հսկողութեան»:

«Ապտ Ալլահ, Բարակի եղբայրը, երբ Բարակ Իպն Մնրատի հետ էր, զնաց (ամբողջը) Իսա Իպն Եռուտֆ Իպն Իստիֆանուսի: Ալ-Աֆշինէ Բարակին ձերբակալութենէն եւ իր բանակատեղը բերուելէն վերջ, երբ զայն հսկողութեան տակ զբաւ, իրեն (ալ-Աֆշինի) տեղեկացուեցաւ Ապտ Ալլահին ուր գտնուիլը, թէ ան արդարեւ Իպն Իստիֆանուսի հետ էր: Ըստ այսմ զբրեց առ Իպն Իստիֆանուս՝ Ապտ Ալլահը իրեն զրկել. եւ ասիկա կատարուեցաւ: Երբ ալ-Աֆշինի ձեռքը հասաւ ան՝ զայն բանտարկեց իր եղբոր հետ նոյն տան մէջ եւ մարդիկ զբաւ անոնց վրայ հսկելու, եւ զրեց առ ալ-Մուտազիմ՝ Բարակն ու անոր եղբայրը կալանաւորելն. եւ ալ-Մուտազիմ յանձնարարեց զանոնք երկուքն ալ իրեն բերել: Երբ կը պատրաստուէր Իրաք դառնալու՝ Բարակը կանչեց եւ ըսաւ. Իրապէս ես մտադրած եմ քեզի հետ քաւրայ ելլել, որով վերջին անգամ մը նայէ Ատրպատականի մէջ ինչ բանի վրայ որ կ'ուզես»:

«Բարակ պատասխանեց. Կը ցանկամ իմ փաղափս տեսնել»:

«Որուն վրայ, լուսնկայ զիշեր մը ալ-Աֆշին անոր հետ մարդիկ զրկեց ալ-Բադդ եւ ան (Բարակ) չրջեցաւ անոր մէջ եւ նախեցաւ սպանուածներուն եւ տուներուն վրայ մինչեւ առաւօտ, յետոյ ալ-Աֆշինի մօտ դարձաւ»:

«Ալ-Աֆշին զայն զբաւ էր իր մարդոց»

մէջ մէկուն հսկողութեան տակ. սակայն Բարակ ցանկացաւ ազատիլ այդ մարդէն եւ ալ-Աֆշին ըսաւ անոր. Ինչո՞ւ կ'ուզես ազատիլ անկէ»:

«Ան կու գայ ձեռքերուն վրայ մսի գէշ հոտով, պատասխանեց Բարակ, յետոյ ան կը ննջէ իմ գլխու մօտ եւ իր շունչը գանելի է ինձի: Որով ալ-Աֆշին հեռացուց մարդը»:

«Բարակ ալ-Աֆշինի եկաւ ի Բարզանդ, Շաւալի 10ին (Սեպտեմբեր 15, 837), Բուզբարահի եւ Դիուզադի (Ապու Սաճ) միջեւ »:

Տարարի մեկ հետաքրքրող այս նիւթին կարեւոր մասը հոս կ'աւարտի: Կաւելցնէ որ երբ Բարակ Սալիֆային տարուեցաւ՝ վերջինս կտրել տուաւ անոր ոտքերն ու ձեռքերը, յետոյ պատուել ու կրտրել տուաւ անոր ստամոքսը, հուսկ Բարակի զլուխը կտրել տալով՝ Սորասան զըրկեց. իսկ մարմնակոծողը ցիցի զարնել տուաւ Սամաուայի ալ-Աբբասյ բլուրին ծառատանին մէջ: Նոյնը վիճակուեցաւ նաեւ Բարակի Ապտ Ալլահ եղբոր՝ Պաղտատի մէջ, ուր զլխատուեցաւ եւ յետոյ խաչուեցաւ:



Տարարիէն իրր թէ թարգմանարար ներկայացուցած է Բարակի այս մասը հայերէն՝ Բազրատ Սալաթեանց, իր Արաբացի Մատենագիրներ Հայաստանի մասին շարքին մէջ (Վիեննա, 1919), էջ 95-96, շատ համառօտ եւ ոչ հարազատ:



Հոս նախ ներկայացնենք զլխաւոր դերակատարները եւ իրենց ինքնութիւնը հաստատենք:

1. - ԲԱԲԱԿ

Բարակի մասին կը յիշեն մեր պատմիչները: Նախ խօսք տանք Վարդան վարդապետի, որ կը զրկէ. «Յաւուրսն յայնոսիկ